ՀԱՍՄԻԿ ԿԱՐԱԳՈՒԼՅԱՆ

ՀՐԱՉ ՉԱՐԴԱՐՅԱՆԻ ԳՐԱԴԱՏԱԿԱՆ ԷՋԵՐԸ

«Ընկալ մասնիկ մը սոսկ հանճարությանն նախահայրերուս չարչարակոծ, արդարախիղճ: Հոն ուր մահացյալը կկենդանանա, հոն ուր կորստականը կերաշափոխվի անկորստականի: Կիսակենդան երթամ ըմբել բաժակն էլիմսիրին, - դադրիլ ապրելե, ալ դառնալ անվախճան»:

(Հր. Զարդարյան)

Գրական ասպարեզ իջնելով 20-րդ դարի 20-ական թթ., Հրաչ Զարդարյանը շարունակեց իր մեծ ուսուցիչների՝ արևմտահայ նշանավոր գրողներ Դանիել Վարուժանի, Սիամանթոյի, Ռուբեն Զարդարյանի ստեղծագործությունների լավագույն ավանդույթները: Նրանց մնաց իր կոչումը տեսավ ժողովրդին ծառայելու մեջ, գրեց ժողովրդի համար, ժողովրդի մասին, գրեց մայրենի լեզվով՝ օտար լեզվով գրելը համարելով կամքվոր ուծացում:

Հր. Զարդարյանին վիճակվեց գրել պատմական բարդ ու ծանր ժամանակներում: Նա գրական կյանք մտավ՝ լավ իմանալով սփյուռքահայ գրականության դառն վիճակն ու ապագան: Մանավանդ որ Սփյուռքում նրա ապրած առաջին տարիներն արդեն անտարակուսելիորեն բերեցին մեծ վտանգի զգացման փաստը, և ինքն էլ դարձավ այդ վտանգը սահազանգողներից մեկը: Զարդարյանն իր ողջ գիտակցական կյանքը, իր անսպառ եռանդը նվիրաբերեց իր հարազատ ժողովրդի տարագիր հատվածին՝ սփյուռքահայությանը, մասառեց կյանքի հարուցած դժվարությունների դեմ, մասառեց անդուլ, աննահանջ՝ միշտ բարձր պահելով մարդկային արժանապատվությունն ու հայ ժողովրդի ազգային հպարտության զգացումը, այլ խոսքով՝ դարձավ նրա պայքարի ու ընդվզման երգիչը:

Հր. Զարդարյանը սփյուռքահայ գրողների այն սերնդից է, որին բախտ է վիճակվել մասնակցելու սփյուռքահայ գրականության կարևորագույն հատվածի՝ ֆրանսահայ գրականության ստեղծմանը: Հանրահռչակ Ռուբեն Զարդարյանի որդին՝ Հր. Զարդարյանը, հեղինակ է պատմվածքների, վեպերի, հուշագրությունների, գրադատական էջերի, հրապարակախոսական հոդվածների: Իր բեղուն գործունեությամբ նա հետապնդել է մի նպատակ՝ անձնվիրաբար ծառայել իր ժողովրդին, անմասն նվիրվել հայապահպանման սրբազան գործին, պայքարել ձուլման և ուծացման դեմ:

Դեռևս կենդանության օրոք բարձր է գնահատվել Զարդարյանի ստեղծագործությունը: Նրա գործերի մասին իրենց եիացումի ու գնահատանքի խոսքն են ասել Վահե Վահյանը, Ավետիս Ալիխանյանը, Մառի Աթմանյանը, Մինաս Թեոլեոլյանը, Զարեհ Որբունին, Գրիգոր Պըլթյանը և ուրիշներ: Այսպես օրինակ՝ 1964 թ. «Զվարթնոց» ամսագրում Զարդարյանի 50-ամյա գրական-հասարակական գործունեությանը նվիրված առաջին համարում իր մասին կարդում ենք.

«Սփիւռքի մեր գրականութեան մէջ, ինքնուրոյն ու լիովին կազմուած գիծերով դէմք մըն է Հրաչ Զարդարեան»[1]:

---

[1] Ե. Զարենցի անվան գրակ. և արվեստի թանգարան, Հր. Զարդարյան ֆոնդ 268:

Իր գրական ժառանգությամբ և հասարակական գործունեությամբ արևմտահայ նշանավոր գրող Ռուբեն Զարդարյանի որդին լուսավոր գիծ է թողել սփյուռքահայ մշակույթի պատմության մեջ:

Հրաչ Զարդարյանի ստեղծագործությունների մեջ իրենց ուրույն տեղն ունեն գրադատական էջերը:

Սփյուռքահայ գրականության մեջ լայն տարածում գտած կարոտի, նահանջի, ինքնակենսագրական վեպերին զուգընթաց ստեղծվում էին փիլիսոփայական, հոգեբանական, բարոյագիտական, նաև գրադատական էջեր: Գրական վառ իմացությամբ Ա. Զոպանյանը, Հ. Օշականը, Մ. Թեոլեոլյանը, Գ. Պըլբյանը, Հ. Զարդարյանը և դեռ շատ ուրիշներ իրենց գրադատական էջերով նպաստում էին սփյուռքահայ գրականագիտության ձևավորմանն ու հարստացմանը:

Գրական, հասարակական-հրապարակախոսական գործունեությանը զուգընթաց, Հր. Զարդարյանը զբաղվում է նաև գրաքննադատությամբ, ուր իր մնայուն տեղն է գրավում «Ժամանակ և խորհուրդ յուր» խորհրդածությունների շարքը (1955 թ. և 1962 թ.): Սակայն սրանով չի սահմանափակվում գրողի գեղագիտական միտքը: Կան մի շարք գրադատական մտածումներ, որոնք դուրս են մնացել այս աշխատությունից և որպես առանձին գործեր լույս են տեսել սփյուռքահայ մամուլի տարբեր էջերում, ինչպես օրինակ՝ «Մտածումներ» (1960 թ., «Անդաստան»), «Գուպար խորհրդավոր» (1965 թ., «Անդաստան»), «Թոստոևսկի» (1952 թ., «Անդաստան»), «Մոռայլ փերեզակներ» (1978 թ., «Արահետ»), նաև կյանքի վերջին շրջանում գրած խորհրդածությունները:

Լինելով հայ և համաշխարհային գրականության ու արվեստի խոր գիտակ՝ իր գրադատական էջերում Հր. Զարդարյանը լուսավոր մտքեր է զարգացնում, ցույց տալիս գրականության խոշոր դերն ու նշանակությունը հասարակական կյանքում, նրա առաջ ծառացած արդիական պրոբլեմները և խնդիրները:

Գրողի գեղագիտական մտքերը հիմնականում համախմբվում են հետևյալ հարցերի շուրջ՝ գրական մեթոդների, արվեստի հարաբերությունը իրականության, գրականության բուն առարկայի, գրականության ժողովրդայնության, գրականության և արվեստի նշանակության, գրականության օգտակարության, կյանքում նաև դրականը տեսնելու պահանջի, ձևի և բովանդակության փոխհարաբերության, արվեստի մեջ ինքնատիպության նշանակության, ոճի և այլ հարցերի շուրջ:

Ստեղծագործական բոլոր մեթոդների մեջ Հր. Զարդարյանը առավելությունը տալիս է ռեալիզմին (իրապաշտությանը), քանի որ իրապաշտական գրականության առջև միշտ ծառացել է իրականության համարձակ քննադատությամբ մարդկային առաջխաղացումին նպաստելու խնդիրը: Այդպիսի գրականությունը միշտ ձգտել է անձածկույթ ներկայացնել ամբողջ կյանքը՝ շեշտը դնելով մասնավորապես այն երևույթների վրա, որոնք խոչընդոտում են կյանքի հարթ ընթացքին: Գրականությունը, ըստ Զարդարյանի, չէր կարող իր դերը կատարել, եթե հեռանար կյանքից, հեռանար կյանքի ճշմարտությունից, ամբողջությունը անխտիր ընդունելու պահանջից: Դանիել Վարուժանի նման նա ևս իրապաշտությունը համարում է «Գեղեցիկին հասնելու ամենեն ուղիղ գիծը»: Նա այն գրողներից է, որոնք ռեալիզմը չեն հեռացնում գրական մյուս դպրոցներից, ավելին՝ գալիս է այն համոզման, որ այն իր մեջ ամփոփում է գրական բոլոր նախորդ դպրոցների (խոսքը չի վերաբերվում միայն նատուրալիզմին, որի հանդեպ միշտ բացասական է տրամադրված եղել գրողը) նվաճումները:

«Շիլլերի բարությունը, Չեխովի մարդկայնությունը, Թոլսթոյի կարեկցությունը, Անատոլ Ֆրանսի սկեպտիկությունը, Լոթիի վեհատ տրտմությունը,

Տոսթոևսկիի մարգարեականությունը, Լակերլոֆի ներողամտությունը՝ մեկ-մեկ գույնը, երանգը, մնայուն պաստառը, ենթահողը կկազմեն, որոնց մեջեն ցոլացած՝ մարդկությունը ճշմարտության ավելի մեծ չափով մը դուրս կուգա»[2]:

Ինչպես երևում է ասածից, Հր. Զարդարյանը առաջարկում է իր մեթոդը՝ իրապաշտության մեջ ներդաշնակված բոլոր մեթոդների միասնական ամբողջությունը: Ի՞նչ ձևով, ի՞նչ ճանապարհով է գրողը փորձում հասնել դրան:

Հր. Զարդարյանը բազմիցս է անդրադարձել գրական տարբեր դպրոցներին, ցույց տվել դրանց հատկապես անկումային ուղղությունների թերությունները՝ հասարակական օգտակարության տեսակետից, բայց և չի ժխտել դրանց դրական, ուսանելի կողմերը, որոնց միաձուլումով էլ փորձում է հասնել ամբողջության:

Այսպես՝ Ռ. Զարդարյանի որդին առաջարկում է անտեսել անկումային ուղղությունների թերությունները. ֆուտուրիզմից փորձում է հեռացնել աղմուկը, սիմվոլիզմից՝ ժողովրդին անհասանելի մթամածությունը: Սա շատ հետաքրքրական միտք է և ճիշտ է բնութագրում ռեալիզմի զարգացման միտումը:

Միակ ուղղությունը, որ Զարդարյանը չի ընդունում, նատուրալիզմն է. «Վասնզի իրականը «կյանքի շերտը» դեռ իրականություն չէ.- գրում է նա,- առավել նվազ՝ ճշմարտություն չէ: Ճշգրտության չափազանցված մտահոգությունը կսահմանափակե՝ կնմոթկե, կխեղաթյուրե ճշմարտությունը: Իրապաշտությունը, բնապաշտությունը, այնպես, ինչպես Ֆլոպեռ, Մոփասան, Զոլա կեղանային, պարտադրեցին հակագեղարվեստական տարր ընդունելու»[3]:

Այստեղ է, որ գրողը սխալվում է: Ընդունել իրապաշտությունը և շփման եզրեր չտեսնել նատուրալիզմի հետ, սխալ է: Անընդունելի է նատուրալիզմի նկատմամբ ունեցած նրա թյուր մեկնակետը, որն էլ հետագայում հիմք է հանդիսանում որոշ գրողների (Գր. Զոհրապ, Երուխան) ստեղծագործությունների ոչ ճիշտ գնահատմանը: Ռեալիզմին տուրք տալը ուներ նաև մեկ այլ դրական կողմ, որն է՝ ազգային ձևի պահպանումը: Արվեստը, Հր. Զարդարյանի պատկերացմամբ, արտաքին ձև չէ, այլ էությունը, իմացական ոգին, ազգային մտածողության ամբողջ համակարգը: Եվ դա այն ամենն է, որի պահպանումով հնարավոր է դառնում ազգային գրականության ինքնուրույնության պահպանումը: Գրող-տեսաբանը առավել շատ ծանրացել է հենց այս խնդրին:

Զարդարյանի ստեղծագործություններում ակներև են ազգային ոգին, մտածողությունը, անհանգստությունը, սփյուռքահայության ապագայի մտահոգությունը: Նա համոզված է, որ ազգային ձևի պահպանումով, մանավանդ սփյուռքահայ գաղթօջախում, կարելի կլինի հասնել ազգային ինքնուրույնության:

Իսկ ինչ նպատակ է հետապնդում համամարդկային գաղափարը, որը գրողը միշտ ներկայացնում է ազգային ձևի հետ ներդաշնակ: Հր. Զարդարյանի իղձն է հայ գրականությունը տեսնել համաշխարհային գրականության ընդհանուր համակարգում: Նա միանգամայն ճիշտ ձևով կարողանում է ցույց տալ դրան հասնելու ուղիղ ճանապարհը, որն է՝ գրականության մեջ համամարդկային գաղափարների արտացոլումը: Ինչպես երևում է իր խորհրդածություններից, Զարդարյանը համամարդկային գաղափարը ներկայացնում է ազգային ձևի հետ միասին: Նա բաց գիտակցում է, որ ազգայինի միջոցով է գրողը գնում դեպի համամարդկային արժեքների կերտում: «Ինչպես արվեստագետին համար

---

[2] Հր. Զարդարյան, «Ժամանակ և խորհուրդ յուր», Փարիզ, 1955 թ., էջ 116:

[3] Նույն տեղում, էջ 116::

թանկագին, անգին արժեք մըն է՝ ըլլալ ազգային, այնպես ալ վեպին մեջ նույնքան թանկագին է անոր գաղափարի մը համամարդկային ըլլալը»[4]:

Այսպիսով՝ Հր. Զարդարյանը ազգայինն ու համամարդկայինը ծուլում է իրար, որն էլ համարում է ստեղծագործության մեջ արվեստի կատարելության հասնելու կարևոր նախապայման: Այս տեսակետով էլ նա բարձր է գնահատում Նարեկացու. «Նարեկացու մեծությունը կրխի այս իսկ հանգամանքեն և կհակադրվի — դարձյալ ազգային, պատմական հատկանիշ — միայն իրավունքներ հետապնդող, բոլոր ժամանակներու մարդկության: Իր հոգիի հորիզոնեն, ոչ իսկ ակնթարթ մը, կանհետանա անպարփակ շքեղանքը իտեալին, իտեալներուն ամենեն մարդկայինը»[5]:

Զարդարյանն իր մտածումներում բազմիցս է անդրադառնում հայ գրականության, նամանավանդ արևմտահայ գրականության խնդիրներին ու պրոբլեմներին: Նա այն գրողներից է, որոնք սփյուռահայ գրականությունը համարում են արևմտահայ գրականության շարունակական ընթացքը:

Լինելով գրող և գրականության տեսաբան, Հր. Զարդարյանին մտահոգում է հայ գրականության ապագան՝ վաղվա օրը: Ինչո՞ւ: Զարդարյանը մեկնաբանում է, որ արևմտահայ գրականությունը, տիրող անընպաստ քաղաքական պայմանների ազդեցությամբ, անկման շրջան է ապրում և սա կարող է ջարունակվել ու բացասաբար ազդել գրականության վրա, եթե համապատասխան միջոցներ չձեռնարկվեն: Նա իր հոդվածներից մեկում այսպես է բնութագրում այդ վիճակը. «Հայ ժողովուրդը արմատախիլ, դարձավ աշխարհացրիվ: Հայ ժողովուրդը կորսնցուց հիմնական, նպաստավոր պայմանները, ավանդության պահպանումի իր որոնումների մեջ: Ու այդ բոլորը, որ բարոյական, գրական, գեղարվեստական կալվածներուն մեջ վերանորոգող մշտական ոգի էր, գոսափոխվեցավ կաշկանդումի, կայունության, բռնադատության, կուրության, շիլ մոլեռանդության, բյուզանդականության»[6]:

Նա գտնում է, որ անմխիթարական է հայ գրականության դրությունը: Սփյուռքահայ գրականությունը զարգանում է անընպաստ պայմաններում: Ողջ գրականությունը ողողված է ջարդի տեսարաններով: Գրողները ջարդին տեղյակ-անտեղյակ գրում են, որն էլ վրդովում է Զարդարյանին: Նա ոչ թե դեմ է ընդհանրապես ջարդերի գեղարվեստական պատկերմանը, այլ մտացածին պատկերներին, որոնք մարդկային հիվանդագին տրամադրություններ են արթնացնում, իսկ եթե այդ բանը գրականության զարգացման հեռանկարների տեսակետից անպայման խանգարիչ դեր է կատարում: Զարդարյանը փորձում է գրականությունը փրկել մանր զգացմունքներից, հիվանդագին ապրումներից, երբեմն տիրապետող նատուրալիստական արտահայտություններից:

Ժողովուրդը, չնայած իրեն հասցված դաժան հալածանքներին, աշխատում է դարմանել ցավերը, գտնել ինքն իրեն ու իր կյանքը շարունակել, այնինչ գրականությունը, նամանավանդ արևմտահայ գրականությունը, որի նոր որակն է սփյուռքահայ գրականությունը, շարունակում է հիմը, շարունակում է դոփել իր տեղում:

---

[4] Նույն տեղում, էջ 211:

[5] Հր. Զարդարյան, «Ժամանակ և խորհուրդ լյուր», «Բագին», Բեյրութ, 1962 թ., էջ 4:

[6] Հր. Զարդարյան, «Իմ ժխտումներս», «Բագին», Բեյրութ, 1964 թ., էջ 7:

Իսկ ո՞րն է այն միջոցը, որի շնորհիվ սփյուռքահայ գրականությունը պետք է դուրս գա այդ վիճակից: Զարդարյանի խոր համոզմամբ, դա սկզբունքային քննադատությունն է, որն անխնայորեն ջնջելու է «հրապարակախոսական թե գեղարվեստական դատումի գրականության մեջ հանդիպող խլած կողմնակալ բաժինները՝ փոխարենը զետեղելով «խորհրդածություն մը արդյունք մտքի մաքր ճիգի մը»[7]: «Գրականությունը այդ վիճակեն դուրս բերելե ետքը միայն կարելի կըլլա մտածել անոր զարգացման մասին»[8],- գրում է Հր. Զարդարյանը: Նա գրականության զարգացման համար նշում է երկու նախապայման՝ առաջինը գրողի հասարակական կյանքը բազմակողմանիորեն նանաչելու և արտացոլելու կարողությունը, իսկ երկրորդը՝ գրական ազդեցությունը:

Գրողի կարծիքով, եթե որևէ մեկն ունի անուրանալի տաղանդ և փորձում է գրել, ապա նա ամենից առաջ պետք է բազմակողմանիորեն նանաչի կյանքը, մոտիկ լինի ժողովրդին, իր ներշնչման աղբյուրը դարձնի ժողովուրդը՝ առանց ազգային նեղ սահմանափակման, նրանցից վերցնի իր գրական նյութը: Այս ձևով միայն գրողը կարող է խոր հետք թողնել գրականության մեջ և մնայուն արժեքներ ստեղծել: Գրականությունը, ըստ Զարդարյանի, պետք է ծառայի ժողովրդի կենսական շահերին, արձագանքի նրա կյանքի երատապ հարցերին, լինի նրա ապրումների, երազների, ձգտումների թարգմանը. «Գրականություն մը պիտի ծառայի ժողովրդին, անոնց կյանքեն պիտի ֆաղվի: Գրականությունը մտքի զարդ չէ, գրողին ջղուտ մեկ երանգն է ան, անկե թխած ավիշը պիտի վերանորոգի միտքն ու եռգին»[9]:

Գրականության առարկայի և նրա դերի այսպիսի ըմբռնմանը Զարդարյանը հավատարիմ մնաց իր ողջ գրական գործունեության ընթացքում: Այն վճռական նշանակություն ունեցավ ինչպես նրա ստեղծագործությունների, այնպես էլ գեղագիտական հայեցողության մեջ իբրև ելակետային դրույթ:

Շատ բան կարելի է ասել նրա գրադատական էջերի մասին, սակայն սահմանափակվենք սրանցով: Զարդարյանը զարգացրեց ու հարստացրեց սփյուռքահայ գրականագիտական միտքը, և սփյուռքահայ գրականագիտությունը շատ բանով երախտապարտ է նրան:

---

[7] Ատրինե Տատրյան, «Գրագետ Հր. Զարդարյանի հետ», «Անահիտ», Փարիզ, 1986 թ., էջ 70:

[8] Նույն տեղում, էջ 70:

[9] Նույն տեղում, էջ 70: